

3481

792(47. 925

U-31 p.

55



2011

2004

ԻՍԽԱՅԱՆ ԱՄԻՆԱՆԵԱՆ

XXV

792 (47. 925)
4-31 h.

Ի Ս Ա Յ Ա Կ Ա Լ Ի Խ Ա Ն Ե Ա Ն

25-ԱՄԵԱՅ ԲԵՄԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

XXV

(1896—1921)



2-1/2
~~Handwritten signatures and notes in red and black ink.~~

1923 Մ. 30. 6
P.H. 1/2

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ



1923
Թ Ի Գ Լ Ի Ս

ՀՀ 16 ա.հ.

22022-60

ԹԻՖԼԻՍ

4-րդ տպարան Վ. Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգրաֆ. բաժան.

1923 թ.

Ի Ս Ա Հ Ա Կ Ա Լ Ի Խ Ա Ն Ե Ա Ն

Կ Ե Ա Ս Ս Պ Ր Ա Կ Ա Ա

Բասակ Ալիխանեանը ծն. 1876 թ. փետրվարի 7-ին Դուշեթ գավառական քաղաքում։ Սկզբնական կրթութիւնը ստանում է տեղական հայոց ծխական դպրոցում, ուր երեք տարի մնալուց հետո մայրը նրան տանում է Թիֆլիս և ապա Ներսիսեան դպրոց. մոր փափագն եղել է վոր իր Իսահակը «Վանքի շէտին» ավարտելուց հետո դառնա Դուշեթի քահանա։ Սակայն պատահուն վիճակովում է, անշուշտ իր ներքին ճրգտումների և խառնվածքի համաձայն, իր կեանքում եկեղեցու բնոյց գերադասել թատրոնի բնոյ։ Դեռ 3-րդ դասարանի սան, նա առաջին անգամ մի աշակերտական ներկայացման մասնակցելով այնպես է ընկերների և ուսուցիչների ուշադրութիւնը իր վրա դարձնում, վոր նրան այնուհետև դպրոցում անվանում են «գերասան»։ Այդ լինում է 1893 թվին «Մատոյի կտակը» վողրվիլի ներկայացմանը։ Ինչ տակ կուզէ վոր աշակերտ Ա. ինքն էլ արդեն իրան համարում է ղերասան և այդ գիտակցութիւնը քիչ չէ նախատում նրան դպրոցից դուրս հետեւելու քաղաքի թատրոնական անցուդարձին. իսկ աշակերտական ներկայացումների մէջ այնուհետև միշտ փայլում է՝ վորպէս «գերասան Ալիխանեան»։ Բանը նոյն իսկ այնտեղ է հասնում վոր նա վորոշում է

դպրոցը թողնել և գնալ, ինչպէս էլ լինի, մանել գերասանական վորե է խումբ։ Բարեբախտաբար նրա այդ գեռատի և վաղաժամ վորոշման հակառակում են ուսուցիչները, մասնավորապէս Ստ. Մալխասեան, խորհուրդ տալով դեռ

լրացնել ուսման լիակատար ընթացքը։ 1896-ին Ա. աւարտում է Ներսիսեան դպրոցը և հուլիս թուի օգոստոսին մտնում է գերասան Գր. Աւետեանի կազմած թատրոնական շրջիկ խումբի մէջ։ Այդ խմբակը կազմող ինն անդամները Արեւեան, Աւետեան, Ստեփանեան, Վրոյր, Հասան-Ջալալեան և Յովսէփեան և կանացի ոյժերից՝ տ. Փառանձեմ, տ. Աւետեան և օր. Ախաշեան տասներորդ անգամը վերցնում են Ա.-ին, հշանակելով նրան ամսական 30 ո. ուժիկ։



Ալիխանեան առակիւ

Դերասանական խումբը սկսում է իր տուրնէն անցնելով Բաթում, Կրասնոդար, Արմաւիր, Նոր-Նախճաւան, Ռոստով և վերադարձին՝ Բագու։ Ա.-ին, որպէս նոր մարդու և ամենքից կրասերին, այդ խմբի ճամբորդութեան ընթացքում հանձնվում է մի շարք պաշտոններ ու պարտականութիւններ. նա և գերասան է և հուշարար, և բիկվիդիտոր և գերեր արտագրող։ Ոչ միայն արտունջի մի խոսք չեն լսում նրանից իր ավագ ընկերները. այլև տեսնում են եռանդուն և բարեխիղճ աշխատանք, իրանց կողմից էլ աշխատելով «առաջ

քաշել այդ տղային»։ Հետևապես 1897 թվին Ա.-ի համար բացվում է գործունեությունն իր ասպարեզ. այդ լինում է Բագումը։ Այստեղի հայ թատրոնական կոմիտեն այդ թվին կազմակերպում է մի ուժեղ թատերախումբ, ունենալով մի շարք յայտնի ույժեր. Աբելեան, Պետրոսեան, Ավետեան, Արաքսեան, Վրոյր, Յարութիւնեան, Ստեփանեան լինելուց բացի, Թիֆլիսից հրավիրվում են Գարապաշ և Ֆելեկեան քոյրերը, Կ. Պոլսից հրավիրվում է տ. Սիրանոյշ և Նգիստոսից՝ Դ. Թուրեան։ Խմբի ուժիտները լինում է տ. Հրաչեայ։ Ահա սկսնակ Ա. մտնում է այս խումբը իր համեստ աշխատակցութիւնը բերելու ընդհանուր գործին։ Նա ընկած լինելով իր վստույց երազած բնագաւառը, այդ ժամանակ կարողանում է զարգացնել իր բեմական ընդունակութիւնները, միաժամանակ ծանոթանալով թատրոնական տեխնիկայի հետ։ Անսպասելի հաճույք է պատճառում ամենքին, վոր այդ «համեստ աշխատակիցը» մի օր «Փշոտ ճանապարհ» (գերմաներենից թարգմանված) պիեսի ներկայացմանը՝ պատանի լեզունի գերում, հնարավորութիւն ունենալով ցուցադրել իր շնորհքը, կատարելապէս գոհացնում է թէ ընկերներին և թէ հասարակութեան։ Փորձված ուժիտների աչքից չէ կարողացել վրիպել նա, ստանալով առաջին անգամ մի այդպիսի դեր և կատարելով փայլուն կերպով։ Դա լինում է Ա.-ի առաջին հաջողութիւնը, առաջին եկամուտը, և այն օրվանից նա արդեն իր համար ստեղծում է դերասանի անուն։ Մամուլը ողջունում է երիտասարդ արվեստագետին, գուշակելով

պայծառ ապագայ։ («Մուրճ»՝ Լևոն Մանուկեան և «Տարազ»՝ Ա. Նազարեթեան)։

Ինչպէս այդ թատերաշրջանում, այնպէս էլ հետևելով չորս ձմեռային սեզոններում, Ա. մտնում է Բագվի թատրոնում, հետզհետէ առաջագիմելով, իսկ տարվա այլ եղանակներին նա դերասանական խմբերի հետ շրջում է մի շարք քաղաքներ՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Շուշի, Աստրախան և Անդրկասպեան երկրներ, զավառներում էլ տարածելով իր համբավը։

1902 թվի աշնանից Թիֆլիսում հայ թատրոնի գործը վարչապէս զբաղում է ավելի լավ հիմքերի վրա։ Մասնավոր ղերեկցիաները և կոմիտեաները տեղի են տալիս նոր



Դ. Ավետեանի քաղաքական 1896-ին

կազմակերպված Հայոց Դրամատիք. ընկերութեան. այդ ընկերութեան խորհուրդն աշխատում է Թիֆլիս գրավել հայ բեմի լավագույն ույժերին: 1902—03 թաաերաշրջանին տ. Սիրանուշ և Պետրոսեան մնում են Բազմում, պայման ունենալով տեղական թատրոնական վարչութեան հետ. այնտեղ է մնում և Ա., ունենալով նրանց հետ ընկերական կապակցութիւն: Իսկ հետեւեալ 1903—04-ի սեզոնում



Աղիխանեան—Էզոն

նա արդէն Թիֆլիսումն է և աշխատում է Հայոց Դրամատ. ընկերութեան խումբում: Թիֆլիսում նրան սպասում էր երկրորդ հաջողութիւնը և աւելի լայն հասարակութեան հիացմունքը. և ահա ինչպէս. օտար թատրոնական աշխարհում հանդէս էր եկել, եթէ կարելի է այսպէս ասել, մի նոր ամպլուա, գրամատիք դերերի մէջ մի նուրբ, նեարգային հիւանդատ տիպար, իր հոգեհիւանդաբանական(պսիխոլատիք) ներքնաշխարհով.

մի բնորոշին նոր ցիկլ կազմեցին այն տեսակի դերերը, ինչպէս Ֆուլդի Հիմարը, «Ուրվականները» (Իրսէն) Օսպայզը, «Ապուշը» (Դաստոնովսկի) Իշխան Մըշկինը և այլն: Ահա

Աղիխանեանը իրեն մեզմ տերպերամենաին, իր լիրիքական խառնվածքին միանգամայն հարողատ զանեկով այդ տեսակի դերերը, պատրաստում է իր հայերէն սեպերուաբը և առաջին անգամ հայ բեմական տրվիտի մէջ հանդէս է գալիս որպէս այգպլսին: Նա մեծ գովարութեամբ ձեռք է բերում Դաստոնովսկու վեպից գրամայի փոխադրած «Ապուշը» (Идиот) և հանձնում է իր մի ծանոթին (Գ. խ.) թարգմանելու միսչե իր բենեֆիսը: Պիեսը խաղացվում է փայլուն յաջողութեամբ և բենեֆիցիանտ Աղիխանեան—Մըշկինը հանդիպում է ազմկայից ցույցերի:

Այդ սեզոնում նա խաղում է նույնպէս Ֆրիցլենի



Աղիխանեան—Իւսան Մըսկին

(«Ֆրիցլեն») և Սլետտեակովի («Վերաքննիչ») դերերը ոչ պակաս հաջողութեամբ: Թատրոնական հասարակութիւնը,

մամուլը միաբերան հայտնում են իրանց գոհունակութիւնն ու հիացմունքը, (տես Ա. Ք-ի և Ա. Ա-ի հոդվածները «Մուրճ» ամսագրի նույն տարվա համարներում.):

1906—7 ձմեռային թատերաշրջանի համար Ա. հրավիրվում է Նոր-Նախճավան, ուր դերասան Գ. Պետրոսեանի ղեկավարութեամբ կազմվել էր մի կանոնաւոր խումբ: Շատ չանցած Պետրոսեանը վախճանվում է, խմբի ղեկավարութեան պարտականութիւնը ընկնելով Ա-ի երիտասարդ ուսերին:

Հետեւեալ 1907—8 և 1908—9 սեզոններին Ա. գործում է Բագվում՝ Հայոց Կուլտուրական Միութեան թատերախմբում, իսկ 1909-ի աշնանից վերահաստատվում է Թիֆլիսում Դրամատիք. ընկերութեան խմբում, ուր նրան սպասում էր երրորդ փայլուն հաջողութիւնը: Այս անգամ նրան նշանավոր դեր է ծառայում Ալ. Տալստոյի «Յար Ֆեոդոր» պիեսը, փորձ մէջ Ա. ցարի դերը դուրս է բերում ճիշտ իր ըմբռնումներին և ամպլուային համաձայն, ստեղծելով մի գեղարվեստական տիպար:

Ձմեռային ամիսները Թիֆլիսում անցնում, նա, ըստ սովորութեան, զարնանը և ամառվա ամիսներին գերաս. խմբերի հետ արախտական տուրնէի է դուրս գալիս, այս անգամներն էլ գնալով Ռուսաստանի մայրաքաղաքները այն տեղերի թատրոնական կեանքը, առավելապէս գեղարվեստական թատրոնի ներքին կառուցվածքն ուսումնասիրելու հնարավորութիւն ստանալով: Նա մօտիկից տես-

նում է թէ ինչպէս այստեղ այլ կերպ է դրված աշխատանքը, մեծ ֆիզուրաներն էլ միաձուլվում են գործի ամբողջութեան մէջ, կոլլեկտիվ կերպով փոքրերի հետ ստանալով կատարեալ ներդաշնակութիւն: Եւ կոլլեկտիվիզմի գաղափարը նա այդ օրվանից սրգեգրում է ավելի հաստատուն, ավելի զիտակից:



Ալիստեան—Յար Ֆեոդոր

նական ընկերակցութեան: Դերասանները բաժանված երկու մասի՝ մի տեսակ գեղարվեստական մրցում է առաջ գալիս նրանց միջև: Դրամատիքականի խմբում փայլում են Սևուսեան, Փափաղեան, Բերդեան (խոսքը արական ույժերի մասին է), իսկ «Գուրգեն» խմբում Աբեղեան, Զա-

1912—13 թատերաշրջանում հայ բեմի ղեկավարութեան մէջ մի խոշոր նորութիւն է երևան գալիս և հեղհեղում Թիֆլիսի թատրոնական կեանքը: Շանթի «Հին Աստվածներ» քնարական բանաստեղծութիւնը քան դրաման բեմ է հանվում և ունենում չտեսնված հաջողութիւն, նոյն սեզոնում կրկնվելով ութն անգամ: Ա. այստեղ էլ իր գործունէութեան մէջ չորրորդ անգամ հանդիպում է մեծ հաջողութեան, ազմկալից ցուլյերի և ովաղիաների: Նրա արեգան նույն հոգե-հիվանդաբանական մեղմ և քնքուշ, գերազանցողէն լիբիք խառնվածքով մի «տէրեանական» տիպար է հանդէս գալիս: Թատրոնական հասարակութիւնը, մամուլը նրան այդ դերի մէջ համարում է անզուգական:

1916—17-ին Թիֆլիսում գործում են երկու հայ թատերախումբ. Դրամատիք. ընկերութեան և «Գուրգեն» դերասանական ընկերակցութեան: Դերասանները բաժանված երկու մասի՝ մի տեսակ գեղարվեստական մրցում է առաջ գալիս նրանց միջև: Դրամատիքականի խմբում փայլում են Սևուսեան, Փափաղեան, Բերդեան (խոսքը արական ույժերի մասին է), իսկ «Գուրգեն» խմբում Աբեղեան, Զա-

ընթացում, Ալիխանեան: «Օթելլո» են խաղում նույն օրերում երկու խումբն էլ և մավրի գերում հանգես են գալիս Արեղեան և Փափագեան. խաղում են տարբեր ըմբռնումով և տարբեր տեսակի, բայց երկուսն էլ ուժեղ. մինչգետ Ա. իր ռեպերտուարում, իր գերերում մնում է դարձեալ մենակ և անմրցակից. ամպլուան նրան փրկում է:



Ալիխանեան—Արեղա

1921-ի աշնանը Ա. մեկնում է Խ.-Հայաստան, հրավիրված լինելով Երևանի պետական թատրոնում աշխատելու: Նա գործելով այնտեղ մի տարի, 1922-ի գարնանը վերադառնում է Թիֆլիս:


Քաղաքական նոր կարգերի հաստատումով Թիֆլիսում նախկին Դրամատիք. ընկերության փոխարէն հայ թատրոնական գործի շարունակումը հանձնվում է Հայ թատրոնի կոլլեկտիվին, փոքր մէջ պատասխանատու և ղեկավարող դեր ունի ներկայումս Ալիխանեանը:

Ա.-ի գլխավոր և սիրելի գերերը, փորձնքով ստեղծել է

իր փառքը, եղել են՝ 1. Իշխ. Մըշկին («Ապուշը» ըստ Դոստոեվսկու), 2. Արնոյլ («Միխայել Կրամեր» Հաուպտմանի), 3. Օսվալդ («Ուրվականներ» Իբսենի), 4. Զարսկի («Երջանկութիւն» Պշիբըշևսկի), 5. Իւստուս («Հիմարը» Ֆուլդի), 6. Ռոբերտ («Հիվանդ մարդիկ» Հաուպտմանի), 7. Սատին («Հատակում» Գորկի) 8. Արեղա («Հին Աստվածներ» Շանթի). խաղացել է և շարունակում է հաջողութեամբ խաղալ Պետրոնիուս («Յո երթաս»), Սեյրան («Նամուս» Շիրվ.), Նադաշ («Դատաստանը» Դեմիրճեանի): Չենք թւում այն բաղմամբիւ պիեսները, փորձնք մէջ երևան է եկել նա միջակ գերերով, անսամբլը լրացնելու համար:

Ա. թատրոնական գրականութեան մէջ ունի և իր համեստ աշխատանքը. նա հայ ռեպերտուարն հարստացրել է թարգմանելով մի շարք օտար գրամաներ՝ ինչպէս «Հիվանդ մարդիկ» Հաուպտմանի, «Հեղեղը» Հալբի, «Ուրվականներ» Իբսենի, «Վանիւշինի զավակները» Նայդենովի, «Հիմարը» Ֆուլդի և այլ մանր գործեր:

Գ. ԼԵՒՈՆԵԱՆ



Ի Ս Ե Ն Ե Կ Ե Լ Ի Խ Ե Ն Ե Ե Ն

Մեր 1876-ին: եւ այն էլ առանձին պայմանով: Վոր աշխարհի միջանայնեան ինքը պիտի մշակէ: Համաձայնեցին. հաշվելով վոր աշխարհը սովոր է, վոր եկողը միշտ իր գլխին միջանայնեա որոշող դառնա: Ուստի և աշխարհը դառն պես իրենց տան կահկարասին փողոց նետել տվեց, սեղաններն ու աթոռները ստիպեց վոր պատերից կախն, և այս խառնաշփոթութիւնից հասկացվեց, վոր մի սեմիստոր-դերասան ևս եկավ աշխարհ: Հետո օրօրոց պահանջեց և մեջը պատկերով սկսեց իր ապագա գործունեութեան ծրագիրը մշակել: Եւ արդեն օրօրոցում իր ամպլուան վորոշեց: Լայրը: Հենց վոր անանում էր թէ իրեն ուշ չեն դարձնում՝ լաց էր լինում: Անմիջապես հարեան աղջիկները գլխին էին թափվում և սկսում էին ծափահարել, վորից կտրում էր ձայնը:

Երբ մի քիչ մեծացավ, սկսեց շներին ու կատուներին կովացնել, վորպեսզի դրաման ուսումնասիրէ: Մի անգամ էլ, երբ Եդիպ արքան մշակելու համար հարեվան տղայի աչքը հանեց՝ ծնողները իրենից ազատվելու համար տարան Ներսիսեան դպրոցի բակը և իրենք ետ փախան տուն: Այստեղ մնաց Ալիխանեան 7 տարի, և դասատուները ավարտելով նրան՝ 1896-ին դպրոցը հեռացավ նրանից: Անմիջապես մտավ Արեւիկանի խումբը և վերջինս նրան տանելով Հիւսիսային Կովկաս՝ պանդոկներում վարժեցնում էր խաղալ... բակարա և պրեֆերանս: Հենց այդ պանդոկներում Ալիխանեան ուսումնասիրեց և մշակեց իր անտես-կովի գերի պանդոկին վերաբերող մասերը և դառավ իր անտես-կով... ներքեցի՝ դերասան:

Շատ արագ վորոշեց իր դերերը և արագ էլ առաջ եկավ: Մոնապանդ վոր համակրելի ու գեղեցիկ էին թէ իր ընտրած դերերը և թէ... ինքը: Վանահայրութեան հետ շատ էլ գլուխ չունեցավ: Մի քանի օր Սեդան՝ գերագասկեց Արեւիկանի-նը: Ալիխանեանի դեմքը, ինչպես և խարավորը մի փոքր զրծ-

վար է նկարելը: Ինչպես և հասկանալը Յար Իոհան Ֆեոդորովիչին: Օսլայդ, Միշկին, Արեգա, Յար Իոհան, իր անտես-կով—անա գերեր, որ զմարացնում են հարցը: Ի հարկէ նրա գլխավոր գիծը բարութիւնն է և արվեստի չափազանց սերը: Փորձի մի քանի հոգով գնա մտալ թէ՛

— Ընկեր Ալիխանեան, Բոի ճամբան որ կողմն է, ուզում ենք ընկնել մեջն ու խեղդվիլ:

Բարեժպիտ կը պատասխանէ.

— Ուզի՞նք գնացել և ապա ծովեցէք աջ:

— Մենք ուզում ենք կամուրջի վրայից ընկնել:

— Սկզբունքով գեմ չեմ և շատ համակիր եմ ձեր ծրագրին, և մինչև անգամ ավելի լավ, միևնոյն է, միայն հետեցեք սցենարիստին, որ մուտքի սխալ չանէք և գլխովայր ընկէք, որ շարժումը շնորհալի դուրս գայ, մնացածը չա՛մալ չէ: Կարող էք և առանց գրիմի:

Հասարակութիւնը շատ է սիրում Ալիխանեանին: Եւ վորպեսզի յիշվի նրանից՝ միշտ ընծաներ է մատուցանում նրան: Ինքն էլ շատ է սիրում խանութպաններին և վորպեսզի չմոռացվի նրանցից՝ ամեն մե-

կից մի քիչ ապրանք է վերցնում պարտքով և ուշացնում է:

Մի անայնութեան փոս ունեցավ իր կեանքում: Իր դրա-



Ալիխանեան 1906.

մարեղը, վոր երբեք լավ չլցվեց: Ճիշտ է, եղան տարին 'ր, որ «կանգնում էր փոսի վրայ», բայց 14 թվականից զեսը տախտակ է դնում վրան և այնպես է կանգնում: Եղած ժամանակ շոայլում է, չեղած ժամանակ՝ տակավապես է: Մի պատուռ հաց ու պանիր, մի կտոր էլ ծափահարութիւն՝ և նա արգեն գոհ է:

Միշտ գանգատվում է, վոր աշխարհի բեմադրութիւնը զեղեցիկ չէ, վոր ինքը այդ բեմադրութիւնը զեղեցկացնելու պայմանով է աշխարհ եկել: Իսկ երբ իրեն առաջարկում են վոր թող բեմադրէ՝ հինգ հազար փորձ է պահանջում: Չար լեզուներ կան, վոր բամբասում են թե ծույլ է: Ես այդ կարծիքի չեմ: Ինքն էլ է բողոքում և 20 տարի է ուղում է լրագրում հերքել այդ կարծիքը, բայց... ծուլանում է:

Բաբի աստղի տակ է ծնված Ալիխանեան: Չնայած իր տառանգական կեանքին՝ միշտ անել գրութիւնից դուրս է պրծել երջանիկ հինգերորդ արարով: Ամենից շատ վառնգվել է դարադինիներից, բայց իր բախտը՝ Օսիպը միշտ իր ժամանակին հասցրել է պոչմեյստերի կառքը:

Սակայն նա իր բոլոր մանր մունր մեղքերը քափում է գեղեցկի այն սկզբունքով, վոր նրա պաշտամունքն է եղել միշտ:

Նրա կեանքը մի ներդաշնակ երգ է, վորի մեջ լավում են սքանչելի տերցեաներ, երբեմններ: Այսպես՝

Երեք տեղ ումենից շատ խաղացել է Ալիխանեան աշխարհիս վրա.—բեմի վրա, կանաչ սեղանի վրա և փափուկ սրահի վրա: Փափկասիրտ է, փափկաձայն է և փափկակեաց: Կամ՝ զեղեցիկ խոսում է, զեղեցիկ խաղում է և զեղեցիկ... խուսափում:

Ալիխանեան զեղեցկագեւում և համակրելի տղամարդ է: Միշտ կեանքն անց կացնելով սիրանույշների ու միզանույշների հետ՝ ձեկրով և շարժումներով միանգամայն բարեկիրթ եւրոպացի է:

Այնպես է ժպտում երեսից՝ կարծես Սեդայի հայրը լինես: Եւ փողոցում այնպիսի քայլվածք ունի, վոր թվում է թէ վանահոր հետ կովի է և հայր Անտոնի լասան է փնտռում վոր ծղվի:

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆ



Մ Ե Ր Ի Ս Ա Կ Ը

Ընթերցող ընկեր, չի՞ պատահել քեզ արդեօք այսպիսի դէպք, վոր մեկի անունը լսելիս սիրտդ սկսել է ուրախ բարախել ու թոթոռալ, և այդ միջոցին զեմքիդ կարմրելը մատնել է, վոր դու անտարբեր չես գեպի այն անունը, վոր ավին մօտդ:

Ի հարկե կասես — այո:

Իսկ պատահե՞լ է քեզ, վոր տեսել ես այդ մարդուն, բայց... մի վարոշ տարածութիւն արդեօք է հանդիսացել քեզ — մօտենալու: Ա՛խ, ինչպե՞ս կուզեիր, վոր այդ տարածութիւնը չլինէր, և դու համարձակ մօտենայիր նրան, զրկեիր, գզվեիր, գուրդուրեիր ու կրծքիդ պինդ սեղմեիր նրան, թեկուզ սաղ աշխարհը այդ բոպեին մի բերան դառած՝ քեզ խելագար անվաներ...

Ա՛... սիրելիս, դու լսում ես. կընշանակէ այդ էլ է պատահել քեզ հետ:

Ուզիցն ասա՝ քանի՞ անգամ ես ուզեցել գահլիճից բեմ թռչես ու գրկես Իսակին:

Հը՞... կարո՞ղ ես հաշվել...

Իսկ պատահե՞լ է, վոր դու շատ մօտիկ ես եղել այդ քեզ հուզող անձին. այնքան մօտիկ, վոր համարեա կպած. բայց մի աներեմոյթ տարածութիւն քեզ հեռացրել է նրանից: Դու քաշվել ես, ակնածել, նրան շատ մեծ ու բարձր համարել. ու երբ կամեցել ես հետը խոսել, լեզուդ կապ է ընկել, կոկորդդ ցամաքել, կարմրել, շփոթվել ես ու «խայտառակված» հեռացել նրանից, օրեր ու գիշերներ անհանդիստ մտածել այդ «խայտառակութեան» մասին, և

ենթադրելով, թէ էդ մեծ մարդը միշտ յիշում է քո «խայտառակութեան» մասին, փողոցում նրան հանդիպելուց խուսափել է...



Ալիսանանը իր զավակների հետ

Իսակը — ինձ ու քեզ, մեր մանկութիւնից սկսած, այսպիսի անյարմար դրութիւններէ մէջ շատ է գրել: Միտդ է, վոր մի օր մոտս պարծենում էիր, թէ դու Իսահակ Ալիխանեանի մոտ ամբողջ կես ժամ կանգնած ես եղել. բայց ես ինչպէս բարկացրի, վոր քեզնից ավելի շուտ ծանոթացա նրա հետ: Ի՞նչ երանելի ու երջանիկ մարդ էր ես, չէ...

— Ի՞նչ կրկնի, ինձ էլ ծանոթացնես:

— Վռչինչ չեմ ուզում, մենակ թէ ծանոթանամ հետը...

Քանի՞-քանիսն են ասել... Չամաչեմ, անունները կըտամ, առաջին տեղը ինձ գրելով:

Բայց գիտէս Իսակն ինչքան մատչելի մարդ է. մեծի

հետ — մեծ, փոքրի հետ — փոքր, միշտ բարի խորհրդատու, ցավիդ անկեղծ ցավակից, ուրախութեանդ — հրճվանքով մասնակցող:

Հավատա՛, ընկեր ընթերցող. հավատա՛, ճիշտ եմ ասում. ես ինքս անձամբ փորձել եմ, էնպէս լա՛վն է մեր Իսակը... Մի ամաչիր, դո՛ւ էլ մոտեցիր, դո՛ւ էլ ծանոթացիր ու բարեկամացիր լավ բարեկամութիւն անող Իսակի հետ, և այսօր, նրա 25-ամեա հոբելեանի ուրախութեանը մասնակցելով, այնպէս լավ բարեկամ դարձիր, այդ ամենքի բարեկամի հետ, վոր երբ նրա 50-ամեակը կատարելիս լինենք, էն ժամանակ դո՛ւ էլ ինձ պէս ասես.

— Ի՞նչ միամիտն եմ եղել, որ վաղուց չեմ ծանոթացել ու բարեկամացել մեր Իսակի հետ:

Մ. ԴԱՐԲԻՆԵԱՆ



Ալիխանեան և Շախաբունի

ԱՐՎԵՍՏԻ ՔՈՒՐՍԸ

Իսահակ Ալիխանյանից.

Ճերմակեղ եմ գանգոռներն իր լոյսի ախիբ,
Չկարծեր թե կեանքի ձիւնն է իջել վրա.
Քառասունեւեւ զարուհները խնդրաթեւորք լի
Իրենց ձերմակ շուշաններն եմ տվել նրան:

Իր աչքերը քառասունեւեւ օմնո տեսել
Դեռ ժպտում եմ զարմանալին բորբ կրակով.
Ու նորերը նրա շուրջը երազ նիւսել
Դեզերում եմ նոր սիրելու պատրիակով:

Երբ հնչում է նրա ձայնը՝ երգի ախիբ,
Հմայքները քառասուն եւ եւեւ տնցած զարկան
Երազի պէս կըզան-կանցնեն դէպի գալիք
Ու գալիքից սրպէս պատգամ մեզ կըդառնան:

Ու կըտեսնենք ամբողջ կեանքը իր աչքերում,
Իր ձայնի մէջ, իր ձեւերի լուռ հմայքին.
Կըզգանք ինչպէս շունչը նրա մեզ է գերում...
Իր արվեստը Անդրադարձնումն է մեր կեանքին:

Վ. ՆՈՐԵՆՑ

ՄԵՐ ՈՒՍՈՒՑՉԻՆ

«Ժամանակը իր վախճանին կրնառնի,
«Եւ արեւը մի բուռ փոխի կը դառնաւ,
«Բայց իմ սերը վախճան չունի, ափ չունի
«Նա՛ հաղթեմ է, հա՛ անհեղ է, հա՛ անմահ»:

Ա. Ա. Իս.

Եւ մզում է նրան Սիրո զգացմունքը... Իր հայ-
կացքը հառած բարձր հորիզոններ, հոգով ու
մտքով ալեկոծված սլանում է նա, սլանում... որո-
նելու Գեղեցիկը: Եւ նրա որոնող հոգու թեփերը
չեն դադարում ճախրելուց: Ճշմարիտ արվեստագետին միայն ու
միմիայն իր վսեմ գործի սէրը կարող է մղել անդուլ և համառ



Ի. Ալիխանյան 20 տարեկ.

աշխատանքի, վորքան էլ վոր տատասկոտ ու դաժան լինի նրա
անցնելի ուղին: Ոչ ծաղր, ոչ քամահրանք, ոչ լքում, ոչ վաղան-
ցիկ տառապանքներ չեն կարող արգելել նրա ընդգծած ուղին. իր
մշտավառ հոգու ջանք է իր առաջնորդը: Տասնեակ տարիներ
գործել գեղարվեստի անդաստանում, երկար տարիներ կռիվ մղել
պատահականութեան հորձանուտ ալիքների դէմ, երբեք տատան-
ման քայլ չսնել, ու միշտ առաջ դիմել բաց ու պայծառ ճակա-
տով, գեղեցիկը սիրել և մեկնել բազմութեան, ստեղծել իր փառ-
քը և ստեղծել տալ իր նմաններին, ահա կոչումը իսկական ար-
վեստագետի. միմիայն արտիստի հոգու ջերմութիւնն է վոր
մնում է անսասան, իր իլիւզան է որ դառնում է նրա համար
գերբնային հավատ:

Այդպես է Իսահակ Ալիխանյանը, մեր սիրելի արվեստագե-
տը, մեր ուսուցիչը: Այսօր նա կանգնած է մեր առաջ վորպես հե-
րոս իր քսան և հինգամեա փառավոր աշխատանքի, հպարտ ու
հաղթական, բարձր բռնած իր իգեալի դրոշը վոր հայ թատրո-
նի դրոշն է: Նա չէ դադարել դարձեալ իր խորունկ աչքերը
շրջել գեպի նոր վորոնումներ, իր արվեստի մէջ նոր ձևեր և
կատարելութիւններ գտնելու: Իր արծաթադոծ ճակատը մտայլ է
գեոեփս. այդ նշան է վոր նրա մտածկոտ հոգին նոր թռիչքներ ու
նոր ճախրանքներ ունի կատարելու:

Երջանիկ ես, ով դու գեղարվեստի հոգնաջան մշակ, վոր հա-
սկ ես աշխատանքի կարմիր վարնան այս օրերին: Իջեցրու
զլուխդ գավնեա փառկիդ առաջ:

Խոնարհվում եմք:

Գեոտամ ԳԱՎՐՈՇ

Վ Ա Ս Տ Ա Կ Ա Վ Ո Ր Դ Ե Ր Ա ՍԽԱՆ Ը

(Խառնակ Ալիխանեանի 25-ամեակի առթիւ)



Ալիխանեանը իր ընտանեկան օրջանում

Ճշմարիտ արվեստագետը՝ ամենե՛ն ապերախա ու եղերորեն դժգոյն օրերուն իսկ՝ պիտի կրնա կեանքին առջեւն քալել ու տանել Արվեստին դրոշակը բոսորափայլ, փնտռել իմաստն ու Իմաստութիւնը կեանքին: Անիկա պիտի ընդունակ ըլլա օրերու ցրտին կտավը ներկել՝ բոցազեղ տեսիլներով, մտրակել ծոյլ արիւնը մեր երակներուն, բանալ անյայտ դուռները մեր հոգիին՝ տանելով մեզի կարոտէ կարոտ, խռովանքէ խռովանք, մրրկալիբ հուզումներու, ցնցումներու, և՛ կեանքին է՛ն հոյակապ ալեկոծութեանը....

Այսօրեա մեր հօբելեարը, — Ալիխանեան Իսահակ, ոժտեալ վերագրեալներովը, հայ արվեստին և հայ բեմին վաստակավոր մէկ ներկայացուցիչն է անտարակոյս, պսակված տաղանդով և աշխոյժով: Անիկա, երջանկօրէն հայր ու ազնւորէն Մարգը, հակառակ իրեն քիչ մը հառաջացած տարիքին, այնքան զվարթ ու ժիր, իր 25 տարիներու

բեղուն աշխատանքը կրնձայէ մեզի այսօր՝ հավատարիմ հար իր ուխտին, բեմին, ժողովրդին, մարդկութեանը:

Իր կենսագրական աշխատանքին տարրալուծումը մնան ուրիշ գերերու:

Սակայն, կարճ մը, հարկ է ըսել, վոր Իս. Ալիխանեանը եվրոպականն բացի՝ հայ լավագոյն դրամաներու կեդրոնական տիպերը ստեղծեր է: Անիկա «Հին Աստվածներու» առաջին արեղան է: Այս խոնարհ, բայց, իր խոնարհումին մէջն իսկ բարձրութիւն գերասանը՝ իր «աստվածային կրակեն» հուրեր տանիլ չէ մերժած շատ համեստ թատրոններէն մինչև ակադեմիկն ու մշակվածը: Իր մասնակցութիւնը, իբր անաշտո ներկաներ, պէտք է հայտարարենք՝ վոր եղած է սիրայոժար, եղեր է ջերմի՛ն: — «Ահա ես ձեր մէջ, ձեզի հետ, ձեզի համար» — պիտի ըսեր ինքը անշուշտ:

— Այո, ի հարկէ: Անիկա նվիրաբերեր է ինքզինքը, եղեր է մեզի համար և մեր մէջը:

Ողջունենք ուրեմն զայն ցնծութեամբ, ու մեր սիրտերը, որպէս քննադատական՝ վառենք, իր ճամբուն վրա՝ վոր արվեստով է լուսազարդ, վոր Արվեստին համար կըսպառի՝ իբր



ՎԵՍՊԵՐ

ԻՍԱՅԱԿ ԱՆԻՒԱՆԵԱՆ ԵՒ ՎԱՅԱՆ ՏԵՐԵԱՆ

(Զ Ո Ւ Գ Ա Կ Շ Ի Ո)

Հատուկ էր դուք նմանութիւն այս երկու արվեստագետների միջև. նմանութիւնը սակայն չստ է պայծառ վոր կարելի լինէր չնկատել: Հոգեկանի, խառնվածքի, տեմպերամենտի՝ մի կողմից, հոյզերի արտահայտութեան ձևով ու կերպարանքի՝ միւս կողմից: Զարմանալի միանմանութիւն մեկի խաղի և միւսի տողերի միջև: Լիրիզմը ամենքից ավելի, վոր գերակշռում է թէ մեկի և թէ միւսի մեջ, մինչև իսկ այն պահուն, երբ իրանց ստեղծագործութեան նիւթը իր մեջ ավելի գրամատիզմ ունի: Նախորեան կրգային-աղաչական շեշտ, հայրենի գունդութեամբ, մինչև իսկ այն ժամանակ, երբ խաղի կամ գրվածքի նիւթը օտար է: Նույն դադված սահմանները ամեն տեղ և ամեն ժամանակ: Ճաշակը վոր գերազանցորեն իր պատկանելի տեղն ունի արվեստագետի համար, նույնպես համանման ու համակերպ է երկուսի մեջ. կիրթ, նուրբ, չափ ու ձևով տակ, զուսպ վարպես մի arbiter elegantiarum. Եթէ նրանք, հարազատ իրենց լիրիզմի չունեն մեծ թափ, հեղեղային ընթացք, ուժգին թափներ, սակայն ունեն ինքնամոփում, անդորրութիւն, հոգու թափանցիկութիւն: Նրանք քնքուշ են իրենց ստեղծագործութիւններով, վճիռ, մեղմ-մեղմադձիկ, մինչև իսկ հիմնադրական ներվային. ու թովիչ են, փայփայող իրանց խաղով և հնչիւններով: Տերեանի համար «կեանքը մի լուսնոյն հերթով» է, նա մանկական պարզութեամբ է մոտենում մարդկանց և սիրելիների մեջ իսկ տեսնում «մի քաղցր սուտ», «մի քնքուշ սուտ». սիրելիներ, վորոնց «մութ հայեացքները» չի կարող տանել նա և որոնց դիմաց կայ «թաղցնող մի նուրբ վարպետ»: Ալիխանեան գրեթէ իր բոլոր գերերում՝ հանդես է գալիս նույնպես հերթափոխ-բանաստեղծական, մանկական պար-



Ալիխանեան 22 տար:

զութեամբ, քաջ բմրոնում է իր արվեստի մեջ «քաղցր սուտ» ու «քնքուշ սուտը», գիտակցելով նույնպես վոր «մութ հայեացքներ» և նրանց «թաղցնող նուրբ վարպետներ» ճարտար մեկնին է ինքը: Այդպես են մեր երկու արվեստագետները: Ալիխանեանը հայ բեմի Տերեանն է և Տերեանը հայ բանաստեղծութեան Ալիխանեանը:

3481

0012921

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0012921

